

Պ Ի Տ Ա Կ Ա Ն

IV.

Լ. ՏՕՂԱՏՈՅ

ԱՄԵՆԱՄԵԾ ՄԵՂՔԸ

Զորջի վարդապետութեան մասին չեն վիճում, այլ ուղղակի չը դիտեն այն: (Այլապէս էլ չի կարելի վարուել Զորջի վարդապետութեան հետ, որովհետև ով որ ծանօթ է նրան, չի կարող չը համաձայնեալիլ Զորջի հետ):

Եթէ միայն յիշում են նրան, կամ վերագրում են այն, ինչ որ նա չի ասում, կամ նորից պնդում այն, ինչ որ Զորջը հերքել է, կամ որ գլխաւորն է, մերժում են նրան մի միայն նրա համար, որ նա չի համապատասխանում քաղաքատնտեսութեան այն բժախնդրական, թեթեամիտ և կամայական եզրակացութեանց հետ, որոնք անդրդուելի ճշմարտութիւններ են համարւում:

Բայց չը նայած այս բանին, այն ճշմարտութիւնը, որ հողը չի կարող սեփականութեան առարկայ լինել, այնքան պարզուել է ժամանակակից մարդկանց կեանքի շնորհիւ, որ այն կազմակերպութիւնը պահպանելու համար, որտեղ հողային մասնաւոր սեփականատիրութիւն է ընդունւում, միայն մի միջոց կայ, չը մտածել այդ բանի մասին, աչքաթող անել այդ ճշմարտութիւնը և զբաղուել այլ յաշիտակող գործերով: Հէնց այդպէս էլ ասում են ժամանակակից աշխարհի մարդիկ:

Եւրոպայի և Ամերիկայի քաղաքական գործիչներն իրենց ժողովրդի երջանկութեան համար զբաղւում են ամեն տեսակ գործերով՝ մաքսային սակագիններով, գազութներով, եկամտային տուրքով, զինուորական և ծովային նախահաշիւներով, ընկերական խմբակցութիւններով, ըն-

կերութիւններով, ընկերութեանց համախմբումներով, նախագահների ընտրութեամբ, քաղաքագիտական յարաբերութիւններով, մի խօսքով ամեն բանով, բայց ոչ այն միակ խնդրով, առանց որի չի կարող ճշմարիտ բարուքումն կատարուել ժողովրդի կացութեան մէջ, այն է վերականգնելով բոլոր մարդկանց երկրից օգտուելու խախտուած իրաւունքը: Եւ քրիստոնեայ աշխարհի քաղաքական գործիչները թէև իրենց սրտի խորքում զգում են, և չեն կարող չը զգալ, որ իրենց ամբողջ գործունէութիւնը՝ ինչպէս արդիւնաբերական կուռում, այնպէս էլ այն զինուորական կուռում, որին նրանք նուիրում են իրենց սղջ ոյժերը, չի կարող ոչ մի հետեւանքի հասցնել՝ բացի ազգերի ընդհանուր ոյժերի սպառումից, այնուամենայնիւ առանց հեռուն մտածելու, անձնատուր լինելով մի միայն բոսպէի պահանջներին, կարծես թէ սոսկ մոռացութեան տալու նպատակով, շարունակում են պտոյտ գալ այն կախարդական շրջանում, որից գուրս գալու ելք չկայ:

Եւրոպայի և Ամերիկայի քաղաքական գործիչների այդ տարօրինակ ժամանակաւոր կուրութիւնը բացատրում է նրանով, որ նրանք իրենց սխալ ճանապարհով արդէն շատ հեռու են գնացել, այնպէս որ նրանց ազգաբնակութեան մեծագոյն մասն արդէն կտրուած է հողից (Ամերիկայում երբէք հողին կպած չեն էլ ապրել), այլ ապրում է կամ գործարաններում, կամ վարձկան հողագործութեամբ և ցանկանում ու պահանջում է բարւոքել իւր՝ վարձկան բանւորի դրութիւնը: Այդ պատճառով էլ հասկանալի է, որ Եւրոպայի և Ամերիկայի քաղաքական գործիչները՝ լսելով մեծամասնութեան պահանջները, կարող են կարծել, որ ժողովրդի վիճակի բարւոքումն կայանում է մաքսերի, ընկերակցութեանց և գաղթավայրեր ունենալու մէջ. սակայն ուս մարդիկ պէտք է սարգ հասկանային, որ Ռուսաստանի համար, որտեղ հողագործ ազգաբնակութիւնը կազմում է ամբողջ բնակչութեան 80⁰/₀-ը և որտեղ այդահագին բազմութիւնը միայն մի բան է ինդրում, որ նրան հնարաւորութիւն տան նոյն վիճակում մնալու, ժողո-

վըրդի վիճակի բարւոքման համար բոլորովին այլ բան է պահանջուած:

Եւրոպայի և Ամերիկայի գործիչները գտնուում են սխալ ճանապարհով մտորուած և շատ հեռու գնացած մի մարդու վիճակում, որը կարծում էր, թէ իւր ընտրած ճանապարհն էր իսկականը, բայց որքան հեռու էր գնում, այնքան հեռանում էր իւր նպատակից, բայց որը սարսափում է խոստովանել իւր սխալը:

Իայց ուսնները դեռ պտոյտից այս կողմն են և կարող են ճանապարհին կանգնած հարցնել՝ թէ որն է իսկական ճանապարհը, ինչպէս ժողովրդական առածն է ասում:

Իայց ինչ են անում այն բոլոր ուսու մարդիկ, որոնք ցանկանում են, կամ գտնէ ասում են, որ ցանկանում են լաւագոյն կեանք պատրաստել ժողովրդի համար:

Ամեն բանում ստրկօրէն հետևում են այն բանին, ինչ որ կատարւում է Եւրոպայում և Ամերիկայում: Ժողովրդի համար լաւագոյն կեանք պատրաստելու նպատակաւ նրանք աշխատում են մամուլի ազատութեան, կրօնական համբերատարութեան, ընկերակցութիւններ կազմակերպելու ազատութեան, մաքսերի, պայմանական պատիժների, եկեղեցին պետութիւնից բաժանելու, արգիւնաբերական ընկերակցութեանց, աշխատանքի գործիքների համայնականացման և գլխաւորապէս նոյն այն ժողովրդական ներկայացուցչութեան մասին, որը վաղուց գոյութիւն ունի եւրոպական և ամերիկական պետութիւնների մէջ և որի գոյութիւնը բոլորովին չի նպաստել և չի նպաստում ոչ թէ այն միակ ինդերի լուծելուն, այլ նոյն իսկ յարուցման, որը լուծում է բոլոր դժուարութիւնները և կոչւում է հողային խնդիր: Իսկ եթէ ուսու քաղաքական գործիչները խօսում են հողային ղեղձումների մասին, որը նրանք, չը գիտեմ ինչու, ագրար խնդիր են կոչում՝ երևի այն պատճառով, որ այդ անմիտ բառը կը քողարկի գործի իսկական կացութիւնը, այդ խօսակցութիւնը ոչ թէ տեղի ունի այն մաքով, որ մասնաւոր հողատիրութիւնը մի

չարիք է, որը պէտք է ոչնչացնել, այլ այն մտքով, որ զանազան կարկատաններով և կիսատ պռատ միջոցներով խեղդեն, լռեցնեն այդ գլխաւոր, Ռուսաստանում և ամբողջ աշխարհում հերթական դարձած՝ ոչնչացնելու այդ հին, անգութ, ակներև և սոսկալի անարդարութիւնը:

Ռուսաստանում, որտեղ մարդկանց 100 միլիոն բազմութիւնը տանջւում է մասնաւոր անձանց կողմից հողը յափշտակելու պատճառով և անընդհատ բողոքում է այդ մասին, այն մարդկանց վերաբերմունքը, որոնք որոնում են ժողովրդի վիճակը բարւոքելու միջոցներ ամեն տեղ, բայց ոչ այնտեղ, որտեղ նա գտնւում է, յիշեցնում է այն պատկերը բեմի վրայ, երբ բոլոր հանդիսատեսները դեղեցիկ կերպով տեսնում են թագնուողին և պէտք է որ դերասաններն էլ տեսնէին, բայց ձեացնում են որ չեն տեսնում և դիտմամբ գրաւում են իրար ուշադրութիւնը, տեսնում են ամեն ինչ, բացի այն բանից, ինչ որ միայն պէտք է, բայց որը նրանք տեսնել չեն ցանկանում:

V.

Մարդիկ իրանց կաթնատու կովերին փակել են ցանկապատի մէջ: Կովերը տրորել և կերել են շրջապատի մէջ եղած ուտեստը, սոված են, սկսել են կրծել իրար պոչերը, բղղում են, ազազակում, խնդրում են ազատ բաց թողնել իրենց դէպի արօտները: Բայց այդ կովերի կաթնով կերակրուող մարդիկ ցանկապատի շուրջը սարքել են անանուխի, ներկերի և ծխախոտի անկարտաններ, աճեցրել են ծաղիկներ, սարքել ձիարշաւի ասպարէզ, զբօսարան, գնդակ խաղալու հրապարակ և կովերին դուրս չեն թողնում, որպէս զի նրանք չը վշացնեն իրենց այդ ձեռակերտը:

Սակայն կովերը բառանչում են, նիհարում և մարդիկ սկսում են վախենալ, որ կովերը կը դադարեն կաթ տալուց և մտածում են այլև այլ հնարներ նրանց կոփային դրութիւնը բարւոքելու համար: Նրանք հնարում են հովանոցներ, թիմարում են նրանց թաց խողանակ-

ներով, ոսկեգօծում են նրանց եղջիւրները, փոփոխում են կլթելու ժամերը, հօգում են ծեր և հիւանդ կովերի հսկողութեան և բժշկութեան մասին, հնարում են կլթելու նոր և աւելի կատարելագործուած ձևեր, սպասում են, որ բուսնի ինչ որ անսովոր սննդարար մի խոտ, որ նրանք ցանել են շրջապատի մէջ, վիճում այդ և ուրիշ բազմաթիւ խնդիրների մասին, բայց չեն անում և չեն կարողանում անել առանց խախտելու այն, ինչ որ նրանք արել են շրջապատի շուրջը, այն ամենահասարակ և ինչպէս կովերի, այնպէս էլ իրենց համար անհրաժեշտ միակ բանը՝ քանդել շրջապատը և տալ կովերին իրենց շրջապատող առատ արօտատեղերից օգտուելու իրենց յատուկ ազատութիւնը:

Այդպիսով մարդիկ վարւում են անխոհեմ, բայց նրանց վարմունքը շատ հեշտ է բացատրուում. նրանք խնայում են այն, ինչ որ սարքել են շրջապատի շուրջը: Բայց ինչ անուն տալ այն մարդկանց, որոնք դեռ շրջապատի շուրջը ոչինչ չունին արած և միայն հետևելով նրանց, որոնք փակել են կովերին շրջապատի մէջ և չեն բաց թողնում իրենց արածների պատճառով, նոյնպէս փակում են իրենց կովերին շրջապատի մէջ և պնդում, որ այդ անում են կովերի բարեկեցութեան համար:

Ճիշտ այդպէս են վարւում ուրիշ ինչպէս կառավարչական, այնպէս էլ հակակառավարչական մարդիկ՝ սարքելով անընդհատ տանջուող ուրիշ ժողովրդի համար ամեն տեսակ հիմնարկութիւններ, բայց մոռանալով և մերժելով ամենագլխաւորը՝ — այն, ինչ որ նրան հարկաւոր է, ազատել հողը մասնաւոր սեփականատիրութիւնից և սահմանել բոլոր մարդկանց համար հողից օգտուելու միատեսակ իրաւունք:

Հասկանալի բան է, որ եւրոպական մակաբոյծները, որոնք ապրում են ոչ թէ անմիջապէս անգլիական, ֆրանսիական և գերմանական բանւորների աշխատանքով, այլ դաղթավայրերի բանւորների վաստակով, որոնք արտադրում են այն հացը, որ նա փոխում է իւր գործարանական ապրանքների հետ, չը տեսնելով այն բանւորների նեղու-

Թիւնն ու աշխատանքը, որոնք կերակրում և պահպանում են նրանց, կարող են ապագայի համար հնարել այնպիսի սօցիալական կազմակերպութիւն, որի համար իբրև թէ նրանք պատրաստում են մարդկանց, մինչդեռ հանդիստ սրտով զուարճանում են ընտրական արշաւանքներով, կուսակցական կռիւներով, պարլամէնտական վիճաբանութիւններով, նախարարութիւններ կազմակերպելով և հրաժարեցնելով և այլ բազմաթիւ զուարճութիւններով, որ նրանք գիտութիւն և գեղարուեստ են կոչում:

Եւրոպական մակաբոյժների իսկական սնուցիչները Հնդկաստանի, Աֆրիկայի, Աւստրալիայի և մասամբ Ռուսաստանի բանւորներ են, նրանք չեն տեսնում վերջիններիս: Բայց մեզ՝ ուսաներիս համար այդպէս չէ: Մենք չունինք գաղութներ, որտեղ մեզ համար անտեսանելի ստրուկները կերակրէին մեզ մեր առևտրական արգիւնաբերութեան փոխարէն: Մեզ կերակրողները, որոնք միշտ տանջուած են և սոված, միշտ մեր աչքի առաջն են և մենք չենք կարող փոխադրել մեր կեանքի անարդարութիւնը մեզանից հեռու գտնուող գաղթավայրերը, որպէս զի այնտեղի ստրուկները կերակրեն մեզ:

Մեր մեղքերը միշտ մեր աչքի առջևն են:

Այստեղ մենք փոխանակ հասկանալու մեր սնուցիչների կարիքները, փոխանակ լսելու նրանց հեծեծանքը և արձագանք տալու նրանց, փոխանակ այդ բոլորի, նրանց ծառայելու պատրուակաւ նոյնպէս պատրաստում ենք ապագայ ընկերվարական կազմակերպութիւն եւրոպական կազապարով, իսկ առայժմ զբաղւում ենք այնպիսի գործերով, որոնք հաճութիւն են պատճառում և զբաղեցնում են մեզ և որոնք իբրև թէ ծառայում են այն ժողովրդի բարեկեցութեան, որից ծծում են նրա վերջին ոյժերը մեզ՝ նրա մակաբոյժներին պահելու համար:

Ժողովրդի բարեկեցութեան համար մենք աշխատում ենք ոչնչացնել գրաքննութիւն, վարչական աքսոր, բանալ ամենայն տեղ հասարակ և գիւղատնտեսական դպրոցներ, մեծացնել հիւանդանոցների թիւը, վերացնել անցագրերը և

հողային գնումները (ВЫКУПЫ), սահմանել խիստ տեսչութիւն գործարաններում, վարձատրել փաստաւածներին, սահմանափակել հողերը, բանկերի միջոցով աջակցել, որ գիւղացիք հող գնեն և այսպիսի բազմաթիւ բաներ:

Բաւական է միայն թափանցել միլիոնաւոր մարդկանց մշտական տանջանքների մէջ, — տեսնել ծերունիներին, կանանց և երեխաների կոտորածը կարիքից, ծանր աշխատանքից և մնունդի պակասութիւնից, ըմբռնել ուս գիւղացի ժողովրդի միայն այն ստրկական վիճակը, ստորացումները, ոյժերի անօգուտ վաճանումը, անբարոյականացումը և անօգուտ ու աւելորդ զժբազդութիւնները, որոնք բոլորն էլ առաջ են գալիս հողի սակաւութիւնից և միանգամայն կը պարզուի, որ գրաքննութիւն, վարչական արտոններ և այլն վերացնելու այդ բոլոր միջոցները, որին ձգտում են ժողովրդական շահերի կեղծ պաշտպանները, եթէ անգամ իրագործուելու լինին, մի միայն մի կաթիլ ջուր կը կազմեն կարիքների այն ծովում, որից ժողովուրդը տանջւում է:

Բայց դեռ այդ ոչինչ, որ ժողովուրդի բարեաց մասին հողածու մարդիկ՝ հնարելով թէ ըստ որակի և թէ ըստ քանակի չնչին փոփոխութիւններ, թողնում են հարկւր միլիոն ժողովրդին հողային յափշտակութիւնից առաջ եկած մշտական ստրկութեան մէջ, այդ դեռ ոչինչ, այդ մարդկանցից շատերը և նրանց միջից ամենից առաջաւորները ցանկանում են, որ այդ ժողովրդի տանջանքներն աւելի և աւելի աճելով, հարկադրեն նրանց թողնել իրենց ճանապարհին աղքատութեան և անառակութեան շնորհիւ ոչնչացած միլիոնաւոր զոհեր, որ հարկադրուած լինին փոխելու իրեն երջանիկ, սովորական, սիրելի և խելացի երկրագործական կեանքն այն կատարելագործուած գործարանական կեանքի, որն իրենք են հնարել նրանց համար:

Ռուս ժողովուրդն՝ իւր երկրագործական վիճակով, իւր սիրով դէպի կեանքի այդ ձևը, շնորհիւ այն հանգամանքի, որ եւրոպական ժողովուրդներից միայն ինքն է շարունակում և ցանկանում մնալ երկրագործ ժողովուրդ,

պատմական ճակատագրով կարծես այնպէս է գրուած, որ բանւորական կոչուած խնդրի լուծմամբ պէտք է գլուխ կանգնի մարդկութեան իսկական յառաջադիմական շարժման գործում: Եւ ահա այդ ուստի ժողովրդին նրա կեղծ առաջնորդները հրաւէր են կարգում՝ ընթանալ եւրոպական և ամերիկական այլասեռուող և մրլսրուած ժողովուրդների քամակից և որքան կարելի է շուտ անառականալ և հրաժարուել իւր կոչումից այն նպատակով, որ նա էլ եւրոպացուն նմանուի:

Զարմանալի է այդ մարդկանց մտաւոր ազդատութիւնը, մարդկանց որոնք չեն ուզում մտածել սեփական խելքով և ստրկօրէն կրկնում են այն, ինչ որ ասում են նրանց եւրոպական առաջնորդները, բայց առաւել զարմանալի է նրանց քարասիրտ լինելը, անգիտութիւնն ու կեղծաւորութիւնը:

V I.

«Վայ ձեզ դպրոց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի նման էք գերեզմանաց բրելոց, որ արտաքուստ երևին գեղեցիկք, իսկ ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և ամենայն պղծութեամբ:»

Նոյնպէս և դուք՝ արտաքոյ երևիք մարդկան արդարք, և ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ: (Մատթ. դ. ԻԳ. — 28 և 28):

Կար ժամանակ, երբ յանուն Աստուծոյ և Նրա ճշմարիտ հաւատոյ կորցնում էին մարդկանց, տանջում, մահուան դատապարտում, կոտորում տասնեակ և հարիւր հազարներով: Մենք այժմս մեր մեծութեան բարձրութիւնից ենք նայում այն մարդկանց, որոնք անում էին այդ:

Բայց մենք անարդար ենք: Մեզանումն էլ կան ճիշտ նրանց նման մարդիկ: Տարբերութիւնը միայն նրանումն է, որ մարդիկ այն ժամանակ այդպիսի բաներ անում էին յանուն Աստուծոյ, յանուն Նրա ճշմարիտ պաշտաման, իսկ այժմ մեր մէջ նման չարիքներ գործողները այդ անում են յանուն ժողովրդի, նրան ճշմարտապէս ծառայելու դի-

տաւորութեամբ: Եւ ինչպէս որ հին մարդկանց մէջ կային անմիտ և ինքնահաւան համոզուած անհասներ, որ իրենք գիտեն ճշմարտութիւնը, ինչպէս որ կային նաև կեղծաւորներ, որ յանուն Աստուծոյ ծառայութեան կանոնաւորու՞մ և ամրացնու՞մ էին իրենց դիրքը, և կար անգիտակից ամբոխ, որն առանց մտածելու գնում էր համարձակ և ճարպիկ մարդկանց ետևից, այնպէս էլ այժմս ժողովրդին ծառայելու գիտաւորութեամբ շարիք գործող մարդիկ բաղկացած են անմտութեան չափ ինքնահաւան համոզուածներից, որոնք կարծում են, որ իրենց յայտնի է ճշմարտութիւնը, կեղծաւորներից և ամբոխից: Իւր ժամանակին շատ շարիք գործեցին Աստուծոյ ինքնակոչ պաշտօնեաները. շնորհիւ այն գիտութեան, որն իրենք աստուածաբանութիւն էին անուանում. բայց ժողովրդին ծառայողները շնորհիւ այն ուսման, որ նրանք գիտութիւն են անուանում, եթէ պակաս շարիք գործեցին, այդ նրանից է, որ դեռ ժամանակ չեն ունեցել, բայց և այնպէս նրանց խղճի վրայ էլ ծանրացած են արեան գետերն ու մարդկանց բաժանումն և կատաղութիւն:

Եւ այդ երկու գործունէութեան նշաններն էլ նոյնն են: Նախ, ինչպէս Աստուծոյ, այնպէս էլ ժողովրդին ծառայողների մեծամասնութեան սանձարձակ և վատ կեանքը: (Իրենց կարծիքով՝ Աստուծուն և մարդկանց ծառայելու կոչումն իրենց ազատում է վարք ու բարքի վերաբերեալ որևէ սահմանափակումներից):

Երկրորդ նշանն է, ուշադրութեան, հետաքրքրութեան և սիրոյ կատարեալ բացակայութիւն դէպի այն, ինչ բանին որ իրենք են ցանկանում ծառայել: Ինչպէս որ իրեն պաշտօնէից համար Աստուածը մի միայն դրօշակ էր և է ցայսօր, և այդ պաշտօնեաները ոչ սիրում էին Նրան, ոչ էլ ցանկանում հազորդակցութիւն ունենալ հետը՝ չէին ճանաչում և ճանաչել չէին ուզում Նրան, ճիշտ այդպէս էլ ժողովրդին ծառայողներից շատերի համար ժողովուրդը միայն դրօշակ է (պատրուակ է) և ոչ միայն չեն սիրում, չեն ուզում հետը հազորդակցութիւն ունենալ և չեն ճա-

նաչում նրան, այլ իրենց սրտի խորքում ատելութեամբ, անարգանքով, զզուանքով և երկիւղով են նայում նրա վրայ:

Երրորդ նշանն է այն, որ ինչպէս առաջինները միևնոյն Աստուծուն ծառայելու հոգածութեան մէջ, այնպէս էլ երկրորդները նոյն ժողովրդին ծառայելում ոչ միայն համաձայն չեն այդ ծառայութեան միջոցների վերաբերութեամբ, այլ իրենց հետ համաձայն չեղողների ծառայութիւնը համարում են կեղծ, վնասակար և բռնի ընդհատելու արժանի: Ահա այդ տեղից են առաջ եկել առաջինների խարոյկները, ինկվիզիցիան, կռիւնեւն ու մահուան պատիժները և երկրորդների բանտարկութիւնները, յեղափոխութիւններն ու սպանութիւնները:

Եւ վերջապէս առաջինների և երկրորդների ամենագլխաւորն ու բնորոշ նշանը.—կատարելապէս անտես են անում և անհոգ վերաբերում՝ դէպի այն պահանջը, որ յայտնում են, ազերսում և կամենում նրանք, որոնց իրենք են ծառայում: Այն Աստուածը, որին նրանք ծառայում էին և ծառայում են, պարզ և ուղիղ յայտնել է նրանց ընդունած Աստուածային յայտնութեան մէջ, որ նրան ծառայելու համար հարկաւոր է սիրել մերձաւորին, վարուել այլոց հետ այնպէս, ինչպէս ցանկանում ենք, որ ուրիշները վարուեն մեզ հետ:

Բայց նրանք ոչ թէ այդ էին ընդունել Աստուծուն ծառայելու միջոց, այլ բոլորովին այլ բան էին պահանջում, այն, ինչ որ իրենք էին հնարել և Աստուծոյ պահանջ յայտարարել՝ ճիշտ նոյն ձևով են վարում և ժողովրդին ծառայողները. նրանք բոլորովին չեն ընդունում այն, ինչ որ ուզում է և պարզ կերպով պահանջում ժողովուրդը, բայց ցանկանում են ծառայել նրան այն բանով, ինչ որ նա ոչ միայն չի խնդրում նրանցից, այլ և ոչ մի հասկանալի ցուցում չունի, բայց որը նրա համար հնարել են ժողովրդին ծառայողները, նրանք չեն ուզում ծառայել նրան այն միակ բանով, ինչին որ նա անընդհատ սպասում է և անդադար խնդրում:

VII.

Հասարակական կեանքի բոլոր փոփոխելի ձևերի մէջ, ամբողջ աշխարհի կեանքում կայ մի և ամենից հասունացած այնպիսի մի խնդիր, առանց որի չի կարելի ոչ մի քայլ անել դէպի առաջ մարդկանց կեանքը բարւոքելու համար: Այդ փոփոխութեան անհրաժեշտութիւնը ակներև է իւրաքանչիւր կանխակալ տեսութիւններից ազատ մարդու համար և այդ փոփոխութիւնը ոչ թէ միայն Ռուսաստանի, այլ ամբողջ աշխարհի գործն է: Ժամանակակից մարդկութեան բոլոր դժբաղդութիւնները կապուած են այդ գործի հետ: Մենք Ռուսաստանում գտնուում ենք միայն այն բաղդաւոր կացութեան մէջ, որ ժողովրդի մեծ մասն ապրելով հողագործութեամբ, հողային մասնաւոր սեփականութիւն չի ընդունում և ցանկանում ու պահանջում է սնչացնել այդ հին յանցանքը և անդադար այդ է կրկնում:

Բայց ոչ ոք չի տեսնում և տեսնել չի ուզում այդ:

Որտեղից է այս տարօրինակ մտորութիւնը: Ինչո՞ւ արդեօք բարի, լաւ և խելօք մարդիկ, որոնցից շատ կան ազատամիտների, ընկերվարականների, յեղափոխականների, նոյն իսկ կառավարչական մարդկանց մէջ, ինչու այդ մարդիկ, որոնք ժողովրդի բարիքն են ուզում, չեն տեսնում այն միակ բանը, ինչ որ նրան պէտք է, այն, ինչին որ նա ձգտում է և առանց որի նա անընդհատ տանջւում է, այլ հոգում են այլ բազմաթիւ և բազմատեսակ գործեր, որոնց ի կատար ածելը՝ առանց ժողովրդի պահանջածը կատարելու, երբէք չի կարող նպաստել նրա բարեկեցութեան: Ժողովրդին ծառայող կառավարական և հակակառավարական մարդկանց ամբողջ գործունէութիւնը նման է այն մարդուն, որը՝ իւր ցեխի մէջ խրուած ձին դուրս հանելու համար՝ ինքը նստած՝ վրայի ապրանքը սայլի մի տեղից միւսն է փոխադրում, երևակայելով որ դրանով գործին նպաստում է:

Ինչո՞ւ է այդպէս:

Այդ հարցի պատասխանը նոյնն է, ինչ որ բոլոր հարցերի պատասխանը այն խնդրի մասին՝ թէ ինչո՞ւ մեր ժամանակի մարդիկ, որոնք կարող են լաւ և երջանիկ ապրել, ապրում են վատ և աղքատ:

Այդ առաջ է գալիս նրանից, որ ինչպէս կառավարչական, այնպէս էլ հակակառավարչական մարդիկ, որոնք ժողովրդի բարիքն են պատրաստում, կրօն չունին: Իսկ առանց կրօնի մարդս ինքը չի կարող ապրել խելացի կեանքով և հետեւապէս կարգին չի գիտենալ ինչն է լաւ և ինչը — վատ, ի՞նչ է պէտք և ինչն է անպէտք ուրիշ մարդկանց համար: Միայն դրանից է, որ մեր ժամանակի մարդիկն առհասարակ և ուսու ինտելիգէնտ մարդիկ մասնաւորապէս, որոնք միանգամայն զուրկ են կրօնական գիտակցութիւնից և ուղղակի պարծենում են այդ բանով, այդպէս սխալ են հասկանում կեանքը և այն ժողովրդի պահանջները, որին նրանք ցանկանում են ծառայել. նրա համար պահանջում են հազարաւոր բաներ, բայց ոչ այն միակ բանը, ինչ որ ժողովրդին հարկաւոր է:

Առանց կրօնի չի կարելի ճշմարտապէս սիրել մարդկանց: Իսկ մարդկանց չը սիրելով՝ չի կարելի գիտենալ, թէ ինչ բան աւելի է հարկաւոր նրանց և ինչը աւելի պակաս: Միայն անկրօն մարդիկ, որոնք հէնց այդ պատճառով ճշմարտապէս սիրել չեն կարող, կարող են ժողովրդի կացութեան բարելաւութեան համար հնարել չնչին բարեօրումներ և չը նկատել այն գլխաւոր շարիքը, որից մարդիկ տանջւում են և որը մասամբ իրանք են ստեղծում: Այդպիսի մարդիկ միայն կարող են քարոզել փոքրի շատէ ճարպիկ կերպով հիւսուած վերացական տեսութիւններ, որոնք ապագայում պէտք է երջանկացնեն ժողովրդին և չը տեսնել այն տանջանքները, որ ներկայումս քաջում է ժողովուրդը և որն անմիջական և հնարաւոր թեթեւացումն է խնդրում: Ճիշտ այն մարդու նման, որը խլելով սովածի կերակուրը, խորհուրդներ տար, (և այն կասկածելի խորհուրդներ) թէ նա ինչպէս պէտք է ապրի ապագայում և կարեւոր չը համարէր այժմեանից բաժին

հանել նրանից խլած կերակրի իրեն համար աւելորդ մասը:

Մարդկութեան մէջ բարեբաղդաբար մեծ և բարերար շարժումները կատարուում են ոչ թէ ժողովրդի հիւթերով սնուող մակաբոյժների ձեռքով ինչ անուն էլ կրելու լինին նրանք, — կառավարչական, յեղափոխական կամ ազատամիտ, այլ բարեպաշտ, այսինքն լուրջ, պարզ, հասարակ և աշխատասէր մարդկանց ձեռքով, որոնք ոչ թէ իրենց շահասիրութեան, սնափառութեան և փառասիրութեան, ոչ թէ արտաքին հետևանքների համար են ապրում, այլ նրա համար, որ կատարեն Աստուծոյ առաջ իրենց կոչումը:

Մի միայն այդպիսիքն են առաջ շարժում մարդկութիւնը իրենց լուս, բայց հաստատուն գործունէութեամբ: Այդպիսի մարդիկ չեն աշխատիլ արտաքուստ աչքի ընկնել մարդկանց և հնարել ժողովրդի վիճակը բարւոքելու այս կամ այն միջոցներ, (այդպիսի միջոցները կարող են անթիւ լինել, բայց նրանք բոլորն էլ չնչին են, եթէ կատարուած չէ գլխաւորը), այլ կաշխատեն ապրել Աստուծոյ օրինաց և խղճի համաձայն, և ջանալով այդպէս ապրել, բնականաբար կընկատեն այդ օրէնքի ամենաակններև խախտումն և կաշխատեն միջոցներ գտնել թէ իրենց և թէ ուրիշներին ազատելու դրանից:

Այս օրերս իմ ծանօթ բժիշկներից մինը երկաթուղու կայարանում գնացքին սպասելիս երրորդ կարգի դահլիճում լրագիր էր կարդում: Մօտին նստող գիւղացին հարցրեց նորութիւններ: Լրագրում «ագրար» (հողային) խնդրի մասին յօդուած կար: Բժիշկը ուսներէն բացատրեց ծիծաղալի «ագրար» խօսքի նշանակութիւնը և երբ հասկանալի դարձաւ, որ խնդիրը հողին է վերաբերում, գիւղացին խնդրեց կարգալ: Բժիշկը սկսեց կարգալ, մօտեցան նաև ուրիշ գիւղացիք և կազմուեց խմբակ, որոնցից մի քանիսը նստած, միւսները իրար մէջքից բարձրացած ընդունել էին լուրջ, ուշադիր և հանդիսաւոր կերպարանք: Երբ ընթերցանութիւնը վերջացաւ, վերջին շարքում կանգնածներից մի ծեր գիւղացի խորունկ հառաչեց և երեսը խաչ հանեց. Այդ մարդը երևի ոչինչ չը հասկացաւ այն

խառնափնթոր լեզուից (ժարգօնից), որով գրուած էր յօդուածը և որը դժուար կը հասկանար նոյն իսկ այդ լեզուով խօսողը:

Նա ոչինչ չը հասկացաւ ինչ որ գրուած էր յօդուածում, բայց ըմբռնեց, որ խօսքը վերաբերում է այն մեծ և հին մեղքին, որից տանջուում էին նրա նախահայրերը և տանջուում է ինքը. ըմբռնեց, որ մեղք գործող մարդիկ սկսում են գիտակցել այն: Եւ այդ հասկանալով, նա մտքով դարձաւ դէպի Աստուած և երեսը խաչ հանեց: Այդ մարդու ձեռքի այդ միակ շարժման մէջ աւելի միտք և բովանդակութիւն կար, քան այն բոլոր դատարկաբանութեանց մէջ, որոնցով լի են այժմս լրագիրները: Այդ մարդը հասկանում է այնպէս, ինչպէս և ամբողջ ժողովուրդը, որ անաշխատ մարդկանց կողմից հող յափշտակելն է այն ամենամեծ մեղքը, որից տանջուում և կոտորուում էին Փիղիքապէս նրա նախնիքները, տանջուում են ինքն ու իւր մերձաւորները, տանջուում էին հոգեպէս նրանք, որոնք կատարում էին այդ մեղքը և նրանք, որոնք գործում են այդ նոյն մեղքը և որ այդ մեղքը, ինչպէս և ամենայն մեղք՝ ինչպէս և ստրկութիւնը, որ լուծուեց նրա աչքի առաջ, պէտք է լուծուի և չի կարող չը լուծուել: Նա գիտէ և զգում է այդ և հէնց այդ պատճառով չի կարող չը դիմել Աստուծուն, երբ մտածում է, որ մօտենում է նրա լուծումն:

VIII.

«Հասարակական մեծ յեղափոխութիւնները միշտ հետեւանք էին և կլինին կրօնական մեծ շարժումներին. ասում է Մաձինին: Եւ այդպիսիներիցն է այն կրօնական շարժումը, որը կատարելու է ռուս ժողովուրդը, — ամբողջ ռուս ժողովուրդը, ինչպէս բանւոր, հողից զրկուած մասը, այնպէս և խոշոր, միջակ և մանր հողատէրերը և այն հարիւր հազարաւոր մարդիկ, որոնք թէև հողի չեն տիրում, սակայն նպաստաւոր դիրք ունին շնորհիւ հողազուրկ ժողովրդի:

Ռուս ժողովրդի կատարելիք կրօնական շարժումը կայանում է այն բանում, որ նա լուծի այն ամենամեծ մեղքը, որ վաղուց արդէն տանջում է բաժանում է ոչ թէ միայն Ռուսաստանի, այլ ամբողջ երկրի բնակիչներին:

Իսկ այդ մեղքը լուծել կարող չեն ոչ քաղաքական բարենորոգումները, ոչ տպագրայ ընկերվարական ծրագիրները և ներկայ յեղափոխութիւնները, ոչ մարդասիրական նուիրաբերութիւններն ու ոչ էլ կառավարչական այն հաստատութիւնները, որոնց նպատակը հողեր գնելն ու գիւղացիներին բաժանելն է: Այդպիսի թերի միջոցները միայն խանգարում են կեդրոնացնել ուշադրութիւնը գլխաւոր խնդրի վրայ և հէնց դրանով կասեցնում նրա լուծումն: Հարկաւոր չեն ոչ զոհեր, ոչ էլ ժողովրդի մասին հոգացողութիւն, այլ կարևոր է որ մարդիկ զգան իրենց կատարած մեղքը, այն մարդիկ, որոնք գործում կամ մասնակից են այդ մեղքին, և ցանկան ազատուիլ նրանից:

Հարկաւոր է, որ այն վիճելի ճշմարտութիւնը, որը միշտ գիտէին և գիտեն ժողովրդի ամենալաւ մարդիկ, — որ հողը չի կարող մի քանիսի սեփականութիւն լինել, և որ հողի կարիք ունեցողներին նրանից ազատ օգտուելու իրաւունքից զրկելը մեղք է, դառնայ բոլոր մարդկանց ընդհանուր համոզմունք և գիտակցութիւն, որպէս զի մարդիկ ամաչեն պահել իրենց ձեռքին և խնայել հողը այն մարդկանց համար, որոնք ցանկանում են նրանից սնուել, որպէս զի ամօթալի դառնայ այդ կարօտեալներից հող պահելը, որպէս զի ամօթ համարուի հողին տիրելը, ամօթալի դառնայ օգտուել այն մարդկանց աշխատանքով, որոնք հարկադրուած են աշխատելու մի միայն այն պատճառով, որ նրանցից խլուած է իրենց՝ հողի վրայ ունեցած օրինական իրաւունքը: Պէտք է կատարուի այն, ինչ որ տեղի ունեցաւ սարկութեան ժամանակ, երբ ստրուկներ ունենալը ամօթալի դարձաւ ազնուականների, հողատէրերի համար, ամօթալի դարձաւ կառավարութեան համար այդ անարդար և անգութ օրէնքների պաշտպա-

նութիւնը, երբ հէնց գիւղացիների համար պարզուեց, որ իրենց վերաբերութեամբ կատարուում է մի անօրէնութիւն, որը չի կարելի ոչնչով արդարացնել: Նոյնը պէտք է տեղի ունենայ և հողային սեփականութեան վերաբերութեամբ: Եւ այդ կարեւոր է ոչ թէ որ և է դասակարգի համար, ինչքան էլ այդ դասակարգը բազմամարդ լինի, այլ հարկաւոր է բոլոր դասակարգերին, ոչ թէ միայն բոլոր դասակարգերին և մի պետութեան բոլոր բնակիչներին, այլ ամբողջ մարդկութեան:

IX.

«Հասարակական բարեփոխութիւնը չի կարող ձեռք բերուել աղմուկով և աղաղակով, գանգաւներով, նկատումներով, կուսակցութիւններ կազմակերպելով և յեղափոխութիւններ առաջացնելով», ասում էր Հէնրի Զորլը. նրան կարելի է հասնել մի միայն մտաւոր վերածնութեամբ և անընդհատ յառաջնադասութեամբ գաղափարների աշխարհում: Քանի որ գոյութիւն չունի կանոնաւոր գաղափարը, չի կարող տեղի ունենալ և կանոնաւոր գործադրութիւն, իսկ երբ կայ կանոնաւոր միտք, կանոնաւոր գործն էլ ինքն ըստ ինքեան կը բղխի նրանից:

Այդ պատճառով էլ հասարակական կեանքի պայմանները բարելաւել ցանկացող իւրաքանչիւր մարդու, իւրաքանչիւր կազմակերպութեան ամենամեծ գործը լինում է գաղափարների տարածումը, մնացած բաները կարող են օգտակար լինել մի միայն այն չափով, ինչ չափով որ նրանք նպաստում են այդ գործին: Իսկ այդ գործին կարող են մասնակցել բոլոր խոհուն մարդիկ՝ նախ մշակելով իրենց համար կանոնաւոր հասկացողութիւններ և ապա փորձելով արթնացնել այն մարդկանց միտքը, որոնց հետ նրանք շփուում են»:

Այդ բոլորովին արդարացի է. սակայն այդ մեծ գործին ծառայել կարողանալու համար՝ բացի գաղափարներից՝ պէտք է լինի և ուրիշ բան — կրօնական համոզմունք, այո՞

այն զգացմունքը, որով անցեալ դարում սարկատէրերն իրենց յանցաւոր էին համարում և միջոցներ էին որոնում, որպէս զի, ի վնաս իրենց շահերի և նոյն իսկ սնանկութեան գնով ազատուէին իրենց ճնշող մեղքից:

Ահա այդ զգացմունքը պէտք է արթնանայ ունեւոր մարդկանց մէջ և հողային խնդրի վերաբերութեամբ, որպէս զի կատարուի հողի ազատութեան մեծ գործը. պէտք է արթնանայ այն աստիճան, որ մարդիկ պատրաստ լինեն զոհել ամեն ինչ, որպէս զի ազատուիլ կարողանան այն մեղքից, որի մէջ թաթախուած ապրել են և ապրում են:

Տիրելով հողի հարիւրաւոր, հազարաւոր և տաս հազարաւոր դէսիատին տարածութեան, հողի առուտուր անելով, այսպէս կամ այնպէս օգտուելով հողային սեփականութեամբ և շուայլ կեանք վարելով, շնորհիւ ժողովրդի այն ճնշուած դրութեան, որ առաջ է դալիս այդ անգութ և ակնյայտնի անարդարութիւնից, — խօսել զանազան ժողովներում և մասնաժողովներում գիւղացիների կեանքի բարելաւութեան մասին՝ առանց զոհաբերելու այդ անարդարութիւնից առաջացած իրենց բացառիկ և ձեռնտու դրութիւնը, ոչ թէ անարդար գործ է, այլ և զզուելի և վնասակար, որն հաւասարապէս դատապարտում են առողջ դատողութիւնը, ազնուութիւնը և քրիստոնէութիւնը: Հողի վրայ բռնեցած իրենց օրինական իրաւունքից զրկուած մարդկանց վիճակը բարւոքելու համար ոչ թէ հարկաւոր է հնարել ճարպիկ միջոցներ, այլ հարկաւոր է զգալ նրանց առաջ ունեցած մեղքը և ամենից առաջ ինչ գնով էլ լինի դադարել այդ մեղքին մասնակցելուց: Մի միայն իւրաքանչիւր մարդու այդպիսի ներքին բարոյական կռիւր կարող է նպաստել մարդկութեան առաջ դրուած խնդիրը լուծելուն:

Ռուսաստանում ճորտերի ազատութիւնը կատարուեց ոչ թէ Ազէքսանդր II-ի, այլ այն մարդկանց շնորհիւ, որոնք հասկացան ստրկութեան օրէնքի մեղք լինելը և իրենց շահերից անկախ աշխատում էին ազատուել նրանից, իսկ գլխաւորապէս այդ կատարուեց այնպիսի մարդ-

կանց ձեռքով, ինչպիսիք որ Նովիկով, Ռադիչևն և դե-
կարրիստներն էին. այնպիսի մարդկանց ձեռքով, որոնք
պատրաստ էին տանջուել և տանջում էին իրենք (առանց
ուրիշներին տանջել ստիպելու) այն դաղափարին հաւա-
տարիմ մնալու համար, որը նրանք ճշմարտութիւն էին
ընդունել:

Նոյնը պէտք է կատարուի և հոգն ազատելու համար-
ես հաւատում եմ, որ այդպիսի մարդիկ կան այժմս,
և որ նրանք կանեն այն մեծ՝ ոչ միայն ռուսական, այլ
համաշխարհային գործը, որը կատարելու է ռուս ժողո-
վուրդը:

Հողային խնդիրն այժմս այնքան հասունացել է, որ-
չափ հասունացել էր ճորտութեան խնդիրը սրանից 50
տարի առաջ՝ ճիշտ նոյնն է կրկնում այժմս: Ինչպէս որ
այն ժամանակ մարդիկ միջոցներ էին որոնում այն ընդ-
հանուր հիւանդութիւնն ու դժգոհութիւնը բուժելու, որը
նկատուում էր հասարակութեան մէջ և արտաքին ու կա-
ռավարական բոլոր միջոցներ էին գործ դնում և ոչինչ
չէր օգնում և օգնել չէր կարողանում, քանի որ չը լու-
ծուած էր մնում անձնական ստրկութեան խնդիրը,
ճիշտ նոյնպէս էլ այժմս արտաքին միջոցներից ոչ մինը
չի օգնում և օգնել չի կարող՝ մինչև չը լուծուի հո-
ղային ստրկութեան հասունացած խնդիրը: Ինչպէս որ
այժմս առաջարկում են բանկերի միջնորդութեամբ հողեր
գնել, կալուածատէրերի և այլ հողերից մասեր կտրել և
այլն, այն ժամանակն էլ առաջարկում էին կիսատ պռատ
միջոցներ, ինվէնտարներ (տնտեսութեան հարկաւոր պա-
րագայք), երեք օրուայ պարոնութեան և ուրիշ շատ ծրա-
գիրներ: Ինչպէս որ այժմս հողատէրերը խօսում են յան-
ցաւոր հողատիրութեանը վերջ դնելու անարդարութեան
մասին, այդպէս էլ այն ժամանակ խօսում էին ստրուկ-
ներ խլելու անարդարութեան մասին: Ինչպէս որ այն
ժամանակ եկեղեցին արդարացնում էր ստրկութեան
օրէնքը, այնպէս էլ այժմս (այն, ինչ որ բռնում է եկե-
ղեցու տեղը) գիտութիւնը արդարացնում է հողային սե-

փականութիւնը: Ներկայիս նման՝ ստրուկներ ունեցողներն էլ՝ փոքր կամ մեծ չափով զգալով իրենց մեղքը, աշխատում էին քաւել այն զանազան միջոցներով, աշխատում էին բահրան աշխատանքով փոխարինելով՝ պակասեցնել տուրքերը, այնպէս էլ այժմս հողատէրերից աւելի զգայունները, հասկանալով իրենց յանցանքը, աշխատում են քաւել այն՝ հողը գիւղացիներին աւելի ձեռնտու պայմաններով բաժանելով, — վաճառելով բանկերի միջոցաւ, ժողովրդի համար դպրոցներ բանալով, զանազան ծիծաղելի զուարճատեղիներ հիմնելով, մոգական լապտերներ գնելով ու թատրոններ կառուցանելով:

Նոյն անտարբեր վերաբերմունք տեղի ունի և կառավարութեան կողմից: Եւ ինչպէս որ ստրկութեան ժամանակ խնդիրը վճռուեց՝ ոչ թէ այն մարդկանց շնորհիւ, որոնք ստրուկների վիճակը թեթեւացնելու համար զանազան խելապատակ միջոցներ էին հնարում, այլ այն մարդկանց շնորհիւ, որոնք զգալով շուտաւոյթ վճռի անհրաժեշտութիւնը, ապագայի խնդիր չէին դարձնում այն և դժուար լուծելու չէին համարում, այլ խակոյն, անմիջապէս աշխատում էին արմատից կտրել գոյութիւն ունեցող չարիքը և մտածել անգամ չէին ուզում, որ կարող են լինել այնպիսի պայմաններ, երբ գիտակցած չարիքը կարող էր շարունակուել, ինչպէս որ նրանք այն վճիռն էին ընդունում, որը ժամանակակից հանդամանքներում լաւագոյն էր համարւում, նոյնպէս պէտք է լինի և հողային խնդրի վերաբերութեամբ:

Խնդիրը կը լուծուի ոչ թէ այն մարդկանց շնորհիւ, որոնք կ'աշխատեն մեղմացնել չարիքը կամ կը սկսեն որոշ թեթեւութիւն հնարել ժողովրդի համար և կամ ձգձգել գործը հեռաւոր ապագային, այլ այն մարդկանց ձեռքով, որոնք կը հասկանան, որ ինչքան էլ մեղմացնելու լինենք անարդարութիւնը, նա կրկին անարդարութիւն կը մնայ չի կարելի թեթեւութիւն գտնել այն մարդու համար, որին մենք տանջում ենք և չի կարելի յետաձգել, երբ մարդիկ տանջում են, այլ անմիջապէս պէտք է ձեռնար-

կել ամենալաւ վճռի և իսկոյն գործադրել այն: Այդպէս պէտք է լինի մանաւանդ այն պատճառով, որ Հենրի Զորջը հողային խնդիրն այնպիսի կատարելութեամբ է մշակել, որ ներկայ պետական կազմի և պարտադիր հարկերի ժամանակ չի կարելի ուրիշ աւելի լաւ, արդարացի, գործնական և խաղաղ վճիռ գտնել:


Հենրի Զորջը գրում է. — «Այն ճշմարտութիւնը խաջնելու կամ ոչնչացնելու համար, որն ես աշխատում էի պարզել, ինքնատիրութիւնը կրկին օգտուել արդարութեամբ: Սակայն այդ ճշմարտութիւնն իւր մէջ բովանդակում է անեցողութեան հրաշալի մի ոյժ, իսկ օգի մէջ արդէն նկատելի է գարնան շունչը: Հողը հերկած է և սերմը ձգուած, կը բուսնի բարի ծառ: Նա թէև դեռ շատ փոքր է, բայց հաւատացողի աչքերն արդէն տեսնում են նրան»:

Եւ ես կարծում եմ, որ Հենրի Զորջը ճշմարիտ է ասում, որ հողային սեփականատիրութեան մեղքի լուծումը մօտ է, որ Հենրի Զորջի առաջ բերած շարժումը վերջին երկունքն էր և շուտով պէտք է հասնի ծնունդը, մարդիկ պէտք է ազատուեն այն տանջանքից, որը կրում էին երկար ժամանակ: Բացի դրանից՝ ես կարծում եմ (և կը ցանկայի ու ցանկանում եմ որ և է կերպ նպաստել այդ բանին), որ այդ մեծ և համաշխարհային մեղքի լուծումն, այդ մեծ խնդրի լուծումը, որը դարագլուխ պէտք է կազմի մարդկային պատմութեան մէջ, վերապահուած է և պէտք է կատարի միայն ուսու, սլաւոն ժողովուրդն իւր հոգեկան և տնտեսական կազմով, որը կոչուած է այդ մեծ՝ համաշխարհային գործի համար. — որ ուսու ժողովուրդը, ոչ թէ հողագուրկ (պրօլետար) կը դառնայ եւրոպայի և Ամերիկայի ազգերին հետեւելով, այլ ընդհակառակն, կը լուծի հողային սեփականութեան խնդիրը՝ ոչընչացնելով այն, և միւս ազգերին ցոյց կը տայ խելացի ազատ և երջանիկ կեանքի ուղին՝ առանց արդիւնաբերական, գործարանական և դրամատիրական բռնութեան և սարկութեան, և որ դրանումն է նրա պատմական մեծ

կոչումը:

Ես ուզում եմ կարծել, որ մենք, ռուս մակարոյձ-
ներս, որ սնուել և մտաւոր աշխատանքի համար ազատ
ժամանակ ենք ձեռք բերել ժողովրդի ջանքերի շնորհիւ,
կրմբոններ մեր մեղքը և մեր անձնական շահերից անկախ,
յանուն արգարութեան և ճշմարտութեան, որը դատապար-
տում է մեզ, կաշխատենք լուծել այն և ազատուիլ նրանից:

Ե. ծ. վ. Մ.



ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

2.

Մինչեւ Ե. դարի Բ. կէտը եպիսկոպոսները ամուս-
նացած էին: Յեղափոխութիւն աշխարհիկ հոգեւորակա-
նութեան կեանքում: Ամուրի եպիսկոպոսների վանքերում
հաստատուելու պատճառներ: Վաղարշապատի կաթու-
ղիկէն եւ Սուրենայ անապատը: Հայ կրօնաւորութիւնը
ըստ Ղազարի: Կրօնաւորութեան անկումն բարոյապէս:
Հաւ կրօնաւորութիւն ի դէմս Թաթլոյ եւ նրա խրատը:—

Մինչև Ե. դարի համարեա կէտը, ինչպէս ընդհանուր,
նոյնպէս և հայոց եկեղեցում եպիսկոպոսները ամուսնա-
ցած էին և կազմում էին աշխարհիկ հոգեւորականութեան
մասը՝ վարելով հոգեւոր տեսչական պաշտօններ: Իբրև բա-
ցառութիւն կային ամուրի եպիսկոպոսներ էլ, ինչպէս մեր
ս. Արիստակէսն ու ս. Գրիգորիսը—ս. Լուսաւորչի որդին
և թոռն, Պաֆնուտիոսը Եգիպտոսի Աղէքսանդրիայում և
Եւստաթէոսը՝ Փոքր-Հայոց Սեբաստիայում: Հայոց վերջին
ամուսնացած հայրապետը ս. Սահակ Պարթևն էր, որ
վախճանուեց Ե. դարի քառասնական թուերին և գուցէ